



ք. Երևան, 11.02.16 թ.

Ելք № 011

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ավելացված արժեքի հարկ վճարողը 2016 թվականի հունվարի 8-ին դուրս է գրվել ծառայությունների մատուցման հարկային հաշիվ՝ 2015 թվականին մատուցված ծառայության մասով (օրինակ 30.12.2015թ. մատակարարման ամսաթվով), որը անվավեր է ճանաչել էլեկտրոնային եղանակով և նույն օրը՝ 2016 թվականի հունվարի 12-ին անվավեր ճանաչված հաշվի փոխարեն դուրս է գրել 30.12.2015թ. մատակարարման ամսաթվով գրվել նոր հարկային հաշիվ: 2016 թվականի հունվարի 28-ին ընկերությունը ներկայացրել է «Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն»:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, խնդրում ենք պարզաբանել՝

- 2016 թվականի հունվարի 12-ին դուրս գրված հարկային հաշիվը, որը վերաբերում էր 2015 թվականին մատուցված ծառայություններին, կարող է արդյոք սահմանափակել հարկ վճարողին 2016 թվականին շրջանառության հարկ վճարող համարվելու հարցում,

- Իրավունք ունի արդյոք շրջանառության հարկ վճարող համարվող այդպիսին համարվելուց հետո դուրս գրել հարկային հաշիվ նախորդող՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվող ժամանակահատվածի համար,

- «Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն» ներկայացնելուց հետո 2016 թվականի հունվարի 1-ից շրջանառության հարկ վճարողը (հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում հայտարարության վերաբերյալ հարկային մարմնի կողմից վավերացված ծանուցման առկայության դեպքում) պետք է արդյո՞ք ներկայացնի ՀՀ ԿԱ ՊԵԿ 11.10.2011թ. 2875-ն հրամանի 1 հավելվածով սահմանված ձևի համապատասխան տեղեկություն, եթե արդեն իսկ հարկային հաշիվը էլեկտրոնային եղանակով ճանաչվել է անվավեր:

Ելնելով վերոշարադրյալից, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի «Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 1007-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան խնդրում ենք տրամադրել հարկային մարմնի պաշտոնական պարզաբանումը վերը նշված հարցի վերաբերյալ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան